

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ**

ՂԱՋՈՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԳՊՀ դասախոս

Այն, որ հիմա մենք չենք պատկերացնում մեր կյանքն առանց բարձր տեխնոլոգիաների, նորություն չէ: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց հաստատուն տեղն ու դերն ունեն կյանքի ցանկացած բնագավառում: Բացառություն չէ նաև ֆինանսական, մասնավորապես հաշվապահական հաշվառման ոլորտը:

Վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաները աստիճանաբար, սակայն հաստատուն կերպով սկսեցին թափանցել նաև հաշվապահական հաշվառման ոլորտ: Դրանց օգտագործումը հաշվապահական հաշվառման ոլորտում հանգեցրեց աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, մի շարք գործընթացների ավտոմատացմանը: Սակայն դրական երևույթներին զուգահեռ առաջացան մի շարք խնդիրներ, որոնց անդրադարձել ենք այս հոդվածում:

Խնդիրներից առաջինը և ամենակարևորն այն է, որ երբ տնտեսվարող սուբյեկտների մեծամասնությունը սկսում է հաշվապահական հաշվառումը վարել համակարգիչների միջոցով, անհրաժեշտություն է առաջանում համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորման:

2012թ.-ի դեկտեմբերի 19-ին հաշվապահական հաշվառման մասին օրենքում կատարվեցին լրացումներ, որոնք վերաբերում էին այս ոլորտին: Դրա հետ զուգահեռ այս ոլորտի վերաբերյալ փոփոխություններ կատարվեցին նաև շահութահարկի և հարկերի մասին ՀՀ օրենքներում:

Հաշվապահական հաշվառման մասին օրենքում կատարված փոփոխությունը սահմանում էր, թե որ կազմակերպություններն են հաշվառումը պարտադիր վարելու համակարգչային ծրագրերով: Մասնավորապես սահմանվում էր, որ 2013թ.-ի հուլիսի 1-ից 1 մլրդ դրամից ավելի շրջանառություն ունեցող կազմակերպությունները պետք է պարտադիր

հաշվառումը վարեն համակարգիչների միջոցով, իսկ 2014թ.-ի հուլիսի 1-ից՝ 500 մլն դրամից ավելի շրջանառություն ունեցողները¹:

Շահութահարկի մասին ՀՀ օրենքում կատարված փոփոխությունն այն էր, որ բոլոր հաշվետվություն ներկայացնող կազմակերպությունները մինչև 2013թ.-ի ապրիլի 15-ը ՊԵԿ-ին գրավոր ներկայացնեն և տեղեկացնեն ընտրված հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների, սկզբունքների և կանոնների, օգտագործվող հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի մասին, եթե օրենքով կամ այլ իրավական ակտով հարկատուին վերապահված է նման ընտրության իրավունք²:

Տնտեսական կյանքում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ, իրավիճակներ, որոնք իրենց հանգուցալուծումը պետք է ստանան օրենքով սահմանված կարգով և ոչ թե կարգավորվեն տրամաբանորեն: Իսկ օրենքում համապատասխան բացերի դեպքում խնդիրները կամ չեն լուծվում, կամ կարգավորվում են տրամաբանորեն: Օրինակ՝ կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով ծառայություն է մատուցում մեկ այլ կազմակերպության: Ըստ պայմանագրի՝ ծառայության մատուցումը տևելու է երեք օր, վճարումը իրականացվելու է բանկային փոխանցման միջոցով: Ծառայություններ մատուցող կազմակերպությունը պատրաստվում է էլեկտրոնային եղանակով հաշիվ-ապրանքագիր դուրս գրել ծառայությունը ավարտելուց հետո: Սակայն առաջին օրվա ծառայությունը մատուցելուց հետո տուգանվում է հարկայն մարմնի կողմից այն պատճառաբանությամբ, որ ծառայությունը մատուցելուց անմիջապես հետո էլեկտրոնային եղանակով դուրս չի գրվել հաշիվ-ապրանքագիր:

Նմանատիպ խնդրահարույց դեպքերը բազմաթիվ են և ընդգրկում են տնտեսական գործունեության մեծ շրջանակ: Խնդիրների լուծումը ենթադրում է բարդ և աշխատատար գործընթաց, քանի որ պահանջվում է մեծ ծավալով տեղեկատվության համակարգում և մշակում: Լուծումների գործընթացը հաճախ ընթանում է ժամանակային խիստ սահմանափակումների, ռիսկի և

¹ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին: Ընդունված 19,12,2012թ.:

²ՀՀ օրենքը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Ընդունված 19,12,2012թ.:

անորոշության պայմաններում, իսկ հետևանքների պատասխանատվության աստիճանն անհամեմատ ավելի բարձր է;

Հաշվապահական հաշվառման բնագավառում հետխորհրդային տարիներից ի վեր պարբերաբար տեղի են ունենում օրենսդրական փոփոխություններ, մշտապես ներդրվում են նոր ստանդարտներ, բարելավվում են հաշվառման համակարգերը, բայց դրանք ոչ միշտ է, որ արդյունավետ են:

Այնուամենայնիվ, ժամանակակից պայմաններում, հատկապես խոշոր և միջին, հաճախ նաև փոքր կազմակերպություններում հաշվապահական հաշվառման ռացիոնալ և արդյունավետ իրականացումն անհնար է պատկերացնել առանց հաշվապահական ավտոմատացված համակարգերի, որոնք հնարավորություն են ստեղծում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու օգտագործումը հաշվապահությունում: Գործընթացը կարևորվում է հանրային, մասնավոր, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում:

Ժամանակակից բարձր արդյունավետություն ունեցող հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերը ոչ միայն օգնում են զերծ մնալ հաշվառման սխալներից, խնայել աշխատանքային ժամանակը, բարձրացնել հաշվապահի աշխատանքի բովանդակայնությունը և ստեղծագործական բաղադրիչը, այլ նաև, որն ամենակարևորն է, ընձեռում է նոր հնարավորություններ՝ կազմակերպությունում վերլուծական աշխատանքի համար, հնարավորություն՝ ստանալու անհրաժեշտ տեղեկատվության ողջ համալիրը՝ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության զարգացման և օպտիմալացման համար: Իրականում մեկ անգամ հաշվապահական ավտոմատացված համակարգերով աշխատելուց հետո ոչ մի հաշվապահ չի ցանկանա «աշխատել ձեռքով», քանի որ ավտոմատացված համակարգով աշխատելու հնարավորություններն ու առավելությունները ակնհայտ են:

Հաջորդ ամենակարևոր խնդիրը գործող հաշվապահների վերապատրաստման խնդիրն է;

Օգտատեր հաշվապահների մի մեծ բանակ չի տիրապետում համակարգչին, որի հետևանքով հաշվապահական ծրագրերի կիրառումը գործնականում դառնում է անհնար: Փաստ է՝ համակարգչին տիրապետող

փորձառու և հմուտ հաշվապահը կարճ ժամանակ անց այլևս առանց համակարգչի չի կարող աշխատել:

Սակայն տեղեկատվական համակարգերից առավելագույն օգուտ ստանալու համար հաշվապահները պետք է լավ տիրապետեն համակարգչին, ծրագրային և ապարատային ապահովվածությանը:

Հայաստանի շուկայում գործող գրեթե բոլոր հաշվապահական համակարգեր առաջարկող ընկերությունները նաև կազմակերպում են դասընթացներ տվյալ համակարգի կիրառման վերաբերյալ: Նմանատիպ դասընթացները սովորաբար արդյունավետ են և օգնում են հաշվապահներին ավտոմատացնել իրենց կազմակերպության հաշվապահական հաշվառումը:

Բավականին բարդ է ավտոմատացման աշխատանքների առաջին փուլը: Այս փուլում ստեղծվում է կազմակերպության տվյալների բազան նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալների հիման վրա: Տվյալների պահոցի ստեղծումը բավականին աշխատատար և բարդ գործընթաց է: Այս փուլում՝ կարճ ժամանակահատվածում, անհրաժեշտ է լինում համակարգիչ ներմուծել մեծ ծավալի տեղեկատվություն: Սակայն տվյալների պահոցի ստեղծումից հետո առօրյա աշխատանքները դառնում են քիչ ժամանակատար և արդյունավետ:

Հաշվապահական համակարգերը պետք է համապատասխանեն որոշակի պայմաններին¹.

- Պետք է լինեն ունիվերսալ, որպեսզի հնարավոր լինի օգտագործել երկար ժամանակ:
- Պետք է լինեն համադրելի, այսինքն՝ աշխատեն այլ փաթեթների հետ համատեղ:
- Պետք է լինեն արդիական, այսինքն՝ պետք է աշխատեն և՛ բարձրակարգ, և՛ ցածրակարգ համակարգիչներով:
- Պետք է լինեն պարզ, որպեսզի այդ փաթեթները կարողանան օգտագործել այլ աշխատողներ, եթե կազմակերպությունը որոշի փոխել անձնակազմը:

Խնդիրներից խուսափելու համար հաշվապահական համակարգերը պետք է հիմնված լինեն տեղեկատվական տեխնոլոգիաներին ներկայացվող ընդհանուր սկզբունքների վրա¹:

¹ Հ, Հարությունյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկային համակարգում, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003, էջ 8:

1. **Համակարգային սկզբունքը կամ մոտեցումը** կարելի է համարել հիմնական սկզբունք: Ըստ դրա՝ անհրաժեշտ է բազմակողմանիորեն վերլուծել կազմակերպության գործունեությունը և կառուցվածքը, բացահայտել լուծվող խնդիրների կազմը, համակարգի տարրերի ֆունկցիոնալ և տեղեկատվական համագործակցությունը միմյանց միջև և արտաքին միջավայրի հետ:
2. **Տեղեկատվական հակադարձ կապ:** Սա կազմակերպության գործունեության արդյունքների արտացոլման հնարավորությունն է ճիշտ ժամանակին, որը թույլ կտա կարգավորել գործունեությունը՝ ընդունելով հիմնավորված որոշումներ:
3. **Անընդհատ զարգացում:** Ենթադրում է հաշվողական տեխնիկայի, ծրագրային ապահովման և այլնի համալրում և թարմացում, որոնց ներդրումը գործող համակարգի մեջ պետք է տեղի ունենա առանց մեծ վերակառուցումների: Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը պետք է ընդլայնի իր հզորությունը, անընդհատ մեծացնի և համալրի տվյալների բազան:
4. **Համատեղելիություն:** Ենթադրում է տարբեր տեսակի և մակարդակների տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի համագործակցություն:
5. **Ստանդարտացում և ունիֆիկացում:** Ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի ստեղծման և զարգացման ժամանակ տիպական, ունիֆիկացված և ստանդարտացված տարրերի օգտագործում:
6. **Ինտեգրացիա:** Ենթադրում է բազմամակարդակ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի գործունեության պայմաններում տվյալների հավաքման, փոխանցման, կուտակման, պահպանման, մշակման, կառավարչական որոշումների ձևավորման գործընթացների միավորում միասնական շղթայի մեջ:
7. **Տեղեկատվական հոսքերի և փաստաթղթաշրջանառության ավտոմատացում:**
8. **Արդյունավետություն:** Ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի ստեղծման ծախսերից տնտեսական արդյունքի ստացում դրանց շահագործման գործընթացում:

¹ Նույն տեղում, Երևան, 2003, էջ 9:

Քանալի բառեր՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, ավտոմատացում, հաշվապահական հաշվառում, հաշվապահական հաշվառման ավտոմատացման զարգացում, տվյալների բազա, տվյալների պահոց:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին: Ընդունված 19,12,2012թ.
2. ՀՀ օրենքը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Ընդունված 19,12,2012թ.
3. Հ. Հարությունյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկային համակարգում, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան 2003,
4. Ս. Գյուլումյան, Ա. Գալանտերյան, Մ. Պողոսյան, Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016:
5. www.armsoft.am

ISSUES OF USING THE INFORMATION TECHNOLOGIES IN ACCOUNTING

GHAJOYAN KARINE

GSU lecturer

Considering the role of IT in accounting, the article dwells on the issues, arising in the process of automation of accounting. The development of automation of accounting is conditioned by regulation of the legislative field, acquiring programs meeting the requirements of organizations, and training accountants. Based on the above, we have identified the problems the solution of which would lead to the development of the sphere.

Key words: *information technologies, automation, accounting, development of automation of accounting, database, information warehouse.*

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В БУХГАЛТЕРСКОМ УЧЕТЕ

КАДЖОЯН КАРИНЕ

Преподаватель ГГУ

Учитывая роль информационных технологий в бухгалтерском учете, в статье рассматриваются проблемы, которые возникают во время процесса автоматизации бухгалтерского учета.

Регулированием законодательного поля, приобретением программы в соответствии с требованиями организации, обусловлено развитие автоматизации бухгалтерского учета. Исходя из этого, нами были отделены те задачи, решения которых будут способствовать развитию данного сектора.

Ключевые слова: *информационные технологии, автоматизация, бухгалтерский учет, развитие автоматизации учета, база данных, хранилище данных.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 13.04.2019թ.: